ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

/ՇՈՒՄ/

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը «Կիլիկյան Հայաստան» թեման դասավանդելիս

Կատարող՝ Հերմինե Աբրեյան Մյասնիկի

Շիրակի մարզի Գյումրու Գր. Լուսավորչի անվան թիվ 31 հիմնական դպրոց,

պատմություն ուսուցչուհի / պատմություն/

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

Ներածություն

Գլոբալիզացիայի և գիտատեխնիկական արագ առաջընթացի ժամանակաշրջանում արժեքային համակարգերը արագ փոփոխության են ենթարկվում :Հայ ժողովրդի նման փոքր ազգերի համար էլ ավելի կարևոր է պահպանել ազգային արժեհամակարգերը,գենոֆոնդը,սովորույթներն ու բարքերը ձուլումից և ոչնչացումից փրկվելու համար:Այսօր՝ 44 օրյա պատերազմից հետո, առավել կարևոր է ուշադրություն դարձնել արժեհամակարգերի և դրանց ձևավորման վրա՝ունենալով Թուրքիայի և Ադրբեջանի նման հարևաններ:Այս ծանր առաքելության մեծ չափաբաժինը դրված է կրթության,դպրոցի ուսերին, և մենք՝ մանկավարժներս, պիտի ունենանք այդ արժեհամակարգերը, կրենք դրանք և փոխանցենք գալիք սերունդներին :

Այսօրվա գործող չափորոշչով նախատեսված է ձևավորել արժեհամակարգ ունեցող ՀՀ քաղաքացի.

Սույն բաղադրիչով նախատեսված համակարգը արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա) գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը.

բ) հարգի Հայաստանի պետական խորհրդանիշերը, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը.

գ) գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում.

դ) գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը.

ե) կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ.

զ) կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը.

է) գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք.

ը) գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը.

թ) հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր,հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ.

ժ) անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը.

ժա) դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը.

ժբ) մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

Բովանդակություն

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության, պատմության, հասարակագիտության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարաբաժանելու առարկաների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և

այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից» [3, 22]: Աշակերտի արժեքների ձևավորման վրա

ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է» : Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ու սուցման գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական

առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող առարկաներից պատմությունը, մասնավորապես՝ հայոց պատմությունը, որով ստեղծված արժեքները ունի սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ:

Հայոց պատմության թեմաներից արժեհամակարգերի ձևավոման իր առանձնահատուկ դերն ու տեղն ունի «Կիլիկիան Հայաստան» թեման: «Կիլիկիան Հայաստան» թեմայի դասավանդումը դուրս է գալիս սոսկ հայոց պատմություն ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների հանդուրժողականության, քաղաքական, տնտեսական, ռազմական, գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Կիլիկյան պետության՝ որպես պետական օրինակելի կառույցի, անհամբելի հարստությունները փռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, քանի որ այս տարածաշրջանում ապրում էին տարբեր կրոններով, լեզուներով, մշակույթով բազմազգ հասարակություն: Իբրև պատմության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող եմ հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ համեմատելու և արժևորելու սեփականը : Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար «Կիլիկիան Հայաստան» թեման հիանալի հնարավորություններ է ընձեռում: Մայր հայրենիքից դուրս, օտար միջավայրում, հայրենիքի կարոտը սրտում, մաքառելով՝

պետականություն ստեղծել և հզորացնել, դառնալ տարածաշրջանում կարևոր քաղաքական, տնտեսական, առևտրական դերակատար՝ ազգային առանձնահատկությունը, սովորույթներն ու արժեքները պահպանելով, հայրենասիրության ուրույն դրսևորում է : Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու կողմից: Ներկայացնում եմ «Կիլիկիան Հայաստան» թեմայի ամփոփման երկու դասի պլան.

Կիլիկիա

Կիլիկյան Հայաստան

Դասի պլան

Դասարանը՝ 7-րդ Ա 45ր

Առարկան՝ Հայոց պատմություն

Թեման՝ Կիլիկյան Հայաստանի առաջացումը

Դասի տիպը՝ Ամփոփման դաս

Դասի նպատակը

- Նպաստել Կիլիկյան Հայաստանի մասին գիտելիքների ձեքբերմանը, Կիլիկիայի հայկական թագավորության կարևոր փաստերը իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, համամատելու, դրանց վերաբերյալ դիրքորոշում հայտնելու, Կիլիկիայի հայոց պետության տեղն ու դերը հայ ժողովրդի պատմության մեջ գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:

Կարողանա՝ վերջնարդյունք

- Ներկայացնել և բացատրել Կիլիկիայի տեղը, դիրքը և պատմաաշխարհագրական առանձնահատկությունները, Հայկական իշխանությունների և դրանց առաջացման ժամանակաշրջանը, Ռուբինյան իշխաններին և նրանց հետ կապված կարևոր իրադարձությունները, Հեթումյան արքայատոհմի հաստատման ժամանակը, այդ տոհմի որոշ ներկայացուցիչների գործունեությունը,
- բնութագրել Ռուբինյան և Հեթումյան նշանավոր գահակալներին,
- բացատրել մոնղոլների հետ դաշնակցելու պատճառները
- թվարկել տնտեսության հիմնական ճյուղերը, որոշ պաշտոնյաների գործառույթները,
- Աշակերտների մոտ ամրապնդել Կիլիկիայում հայկական պետականության ստեղծման նախադրյալները, հայ իշխանների գործունեությունը պետականության կայացման գործում:

Մեթոդներ՝ մտագրոհ, նախագծային աշխատանք, համակարգչային ցուցադրություն, պատմական եռանկյունիներ, զրույց, գծապատկերներ, դերային խաղ, քարտեզային աշխատանք

Միջառարկայական, ներառարկայական կապ-համաշխարհային պատմություն, ՀԵՊ, հասարակագիտություն, հայոց լեզու, աշխարհագրություն, երաժշտություն, տնտեսագիտություն, նկարչություն:

Դասի ընթացքը՝ - հաճախումների հաշվառում, <<Կիլիկիա>> երգի ունկընդրում/3ր/

- Մտագրոհ՝ հարցերի տեսքով /աշխարհագրության ուսուցչի օգնությամբ5ր/
- Նախագծային աշխատանքի ներկայացում /սահիկահանդես/ /15ր/

1. Կիլիկիայում հայկական պետության ստեղծման նախադրյալները,

2.Ռուբինյան իշխանության հիմնադիրը, նրա գահակալման թթ,

3.Ներկայացնել Կոստանդինի գործունեությունը,

4. Ներկայացնել Թորոս Ա-ի գործունեությունը,

5.Ներկայացնել Լևոն Ա-ի գործունեությունը,

6.Ներկայացնել Թորոս Բ-ի գործունեությունը,

7. Ներկայացնել Մլեհին,

8.Ներկայացնել Ռուբեն Բ-ին,

9. Ներկայացնել Ռուբեն բ-ից հետո ստեղծված քաղաքական վիճակը տարածաշրջանում:

Պատմական եռանկյունիներ, գծապատկերներ /3-5ր/:

1198թ հունվարի 6

?



Տարսոն քաղաք

885թ օգոստոսի 26

?



Շիրակավան

Պատասխանը հետևյալն է՝

1. 1198թ հունվարի 6ին, Տարսոն քաղաքում Լևոն Բ իշխանը թագադրվեց, Կիլիկիան հռչակվեց թագավորություն:

2. 885թ օգոստոսի 26-ին Շիրակավանում Աշոտ 1-ինը օծվեց Հայոց թագավոր:

- Անդրադարձ – դերային խաղ /15ր/
- Գնահատում- 2/ր/ գնահատվում են մեղվիկներով՝ անհատական , զույգով և խմբով աշխատելու համար
- Նոր նյութի հանձնարարում-կրկնություն, նախապատրաստում թեմատիկ գրավոր աշխատանքի:

Դերային խաղ

Հեղինակ- 13-րդ դարում մոնղոլական արշավանքների հետևանքով Անին և Դվինը կորցրին իրենց միջազգային նշանակությունը, բայց փոխարենը Կիլիկիան Հայաստանը դարձավ Եվրոպայի և Ասիայի միջև ապրանքափոխանակության մեծ հանգույց: Արևելքից Արևմուտք առևտրական ճանապարհը անցնում էր Կիլիկիայի տարածքով:Ահա Չինաստանից առևտրական քարավանը հասել է Այաս, տեսնենք՝ինչ է կատարվում այնտեղ.

Չինացի առևտրականներ-Բարև, մեր սիրելի եղբայրներ:

Հայ առևտրականներ- Բարով եք եկել հեռավոր Չինաստանից, ճանապարհները անվտանգ էին

Չինացի առևտրականներ- Ոչ այնքան, ավազակները թալանեցին թուղթ բերող քարավանը, բայց քրքումը - զաֆրան/հիրիկի ընտանիքի ծաղիկ, որից պատրաստում են կարմիր ներկ, այն օգտագործում են նաև բժշկության մեջ. գլխացավն է անցկացնում և քուն բերում/, կոճապղպեղը,պաղլեղը/շիբ/,դարչինը, մշկընկույզը, մետաքսը տեղ ենք հասցրել:

Հայ առևտրականներ-Լավ է, ի՞նչ եք տանելու Ձեզ հետ:

Չինացի առևտրականներ-Հացահատիկ, բուրդ, ցփսի/այծի բրդից գործվածք, եվրոպայում հայտնի է կամելոն անունով/, գորգեր, միրգ, գինի, երկաթ, աղ:

Հայ առևտրականներ- Դուկատ/Վենետիկի փող/ ունե՞ք:

Չինացի առևտրականներ-Այո, բայց ձեր Լևոնի դրամը ավելի թանկ է /7.1 գրամ ոսկի /քան դուկատը

Հայ առևտրականներ- Դե ուրեմն գնանք բաժտուն/մաքսատուն/ և կոմենդա /առևտրական գործարք/ կնքենք:

Չինացի առևտրականներ- Գալերը/նավ/ և կոկկերը/առևտրական նավ/ մեզ են սպասում, սիրելի եղբայրներ, չմոռանաք Ջրաշուշանները ամրացնել կոկկերին/ջրաշուշան կրող նավերը

ընդունվում էին Միջերկրականի բոլոր նավահանգիստներում «Խաղաղությամբ եկել եմ,խաղաղությամբ պիտի հեռանամ» կարգախոսով:

Հայ առևտրականներ-Դե, ի գործ...



Կիլիկյան Հայաստան

Դասի պլան

Դասարանը՝ 7-րդ Բ 45ր

Առարկան՝ Հայոց պատմություն

Թեման՝ Կիլիկյան Հայաստանի ամրապնդումը

Դասի տիպը՝ Ամփոփման դաս

Դասի նպատակը

- Նպաստել Կիլիկյան Հայաստանի մասին գիտելիքների ամրապնդմանը, Կիլիկիայի հայկական թագավորության կարևոր փաստերը իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, համամատելու, դրանց վերաբերյալ դիրքորոշում հայտնելու, Կիլիկիայի հայոց պետության տեղն ու դերը հայ ժողովրդի պատմության մեջ գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
- Ըմբռնել և արժևորել Կիլիկիայի հայոց պետության և ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
- Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:

Կարողանա՝ վերջնարդյունք

- Ներկայացնի և բացատրի Կիլիկիայի հայոց պետության ձևավորման պատմաշխարհագրական միջավայրը, հայկական իշխանությունների առաջացման, Ռուբինյան իշխանության ամրապմդման և վերելքի նախադրյալները, թագավորության հռչակման ու զարգացման առանձնահատկությունները, թուլացման և անկման պատճառները, արժևորի Մայր հայրենիքից հեռու անկախ ու զորեղ պետության ստեղծումը, գնահատի Կիլիկիայի հայոց պետության թողած ազդեցությունները աշխարհում, տեղն ու դերը հայոց պատմության մեջ:
- Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց

արդյունքները, հետևանքները, բացատրի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածությունը, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ։

- Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու պատմական գործիչների, բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները։
- Ներկայացնի և համեմատի Կիլիկյան Հայաստանի նշանավոր իշխանների և արքաների պետության անվտանգության և հզորացման ձեռնարկները, փորձի կապեր գտնել արդի գործիչների ձեռնարկների հետ, գնահատի Սիս մայրաքաղաքի դերն ու նշանակությունը Հայոց պատմության մեջ։
- Նկարագրի Կիլիկյան Հայաստանում կաթողիկոսական աթոռի հաստատման գործընթացը, քննարկի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները, կրոնա-քաղաքական խմբավորումների դիրքորոշումները և դրանց ազդեցությունը պետության հետագա ճակատագրի վրա:
- Նկարագրի պետական կառավարման համակարգի, տնտեսական կյանքի, հասարակական միջավայրի, համակեցութային հարաբերությունների առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները Կիլիկյան Հայաստանում. բացատրի դրանց նմանություններն ու տարբերությունները Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության շրջանի հետ, կապեր գտնի իր ներկա կյանքի հետ։
- Ներկայացնի և արժևորի Կիլիկյան Հայաստանի քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, փորձի համեմատել տվյալ ժամանակաշրջանի և հայոց այլ քաղաքակրթական ձեռքբերումների հետ, գիտակցի
- ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը։
- Կապեր գտնի Կիլիկյան Հայաստանի ու արդի գործընթացների և զարգացումների միջև, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը։
- Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները, օգտագործի ըստ անհրաժեշտության։

- Օգտագործի քարտեզներ. ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք:
- Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, դրանց վերաբերյալ արտահայտի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

Մեթոդներ- մտագրոհ,կիսատ նախադասություն, համակարգչային ցուցադրություն /սահիկաշար/, <<պատմական ծառ>> զրույց, աղյուսակի լրացում, դերային խաղ, քարտեզային աշխատանք,երգ, պար:

Միջառարկայական, ներառարկայական կապ-համաշխարհային պատմություն, ՀԵՊ, հասարակագիտություն, աշխարհագրություն, երաժշտություն, տնտեսագիտություն,նկարչություն:

Խաչվող հասկացություններ-

- Համակարգ (Պետություն) Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ
- Կառուցվածք և գործառույթ

Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները

- Օրինաչափություն

Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:

- Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում

Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:

- Անհատներ և հարաբերություններ

Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:

- Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ

Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և

քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:

- Անհատական և մշակութային արտահայտում Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:

Դասի ընթացքը՝ - հաճախումների հաշվառում, <<Կիլիկիա>> երգի ունկընդրում/3ր/:

- Մտագրոհ՝ հարցերի տեսքով /5ր/
- Համակարգչային ցուցադրություն/ընթացքում/
- Դերային խաղ/15ր/
- <<Պատմական ծառ>>/5ր/
- Աղյուսակի լրացում՝ Կիլիկիայի կործանման պատճառները

Սոցիալ-տնտեսական	Կրոնական	Քաղաքական	Մշակութային	Այլ

- Անդրադարձ – աղյուսակի լրացում, կիսատ նախադասություն /10ր/
- Գնահատում- 2/ր/
- Նոր նյութի հանձնարարում-կրկնություն, նախապատրաստում թեմատիկ գրավոր աշխատանքի:
- Պար-/3ր/

Դերային խաղ

Աշակերտները զույգերով ներկայացնում են կիլիկյան արքաների և թագուհիների կատարած գործերը.

Լևոն Մեծագործ- Ես Լևոնն եմ՝ իշխան Ստեփանեի / ում բյուզանդացիները խաշել սպանել են եռացրած ջրի մեջ/ կրտսեր որդին, որպես իշխան հաջորդել եմ եղբորս՝ Ռուբեն Գ-ին:Թագադրվել եմ 1198թ. հունվարի 6-ին `Գրիգոր Զ Ապիրատի ձեռամբ:Հաղթել եմ բազում ճակատամարտեր, Կիլիկիան հզորացրել:

Սիբիլլա- Ես Սիբիլլան եմ՝Զաբելի մայրը, պատմիչները իմ մասին քիչ են գրել, լռում են:

Հեթում-Ես Հեթում Ա-ն եմ ՝ Կոստանդին պայլի որդին, ով ,ամուսնանալով Զաբելի հետ, հիմք դրեց Հեթումյան արքայատոհմին:1254թ. մեկնել եմ Մոնղոլիա և կնքել Կիլիկիայի համար ձեռնտու պայմանագիր:

Զաբել-Ես Զաբելն եմ ՝ Լևոնի դուստրը, Հեթում Ա-ի կինը:Ես հայոց պատմության մեջ առաջին կինն եմ, ով թագաժառանգի իրավունքով թագուհու տիտղոս է ստացել հորից:Իմ օրոք Կիլիկիան հզորացել է, ես էլ զբաղվել եմ բարեգործությամբ:

Լևոն Գ-Ես Լևոն Գ-ն եմ, մայրս՝ Զաբելը, հայրս՝ Հեթում Ա-ն:Իմ օրոք Կիլիկիան մշակութային մեծ վերելք է ապրել:

Կեռան-Ես Կեռանն եմ՝ Լևոն Գ-ի կինը, ունեցել եմ 16 երեխա, որից 2-ը զույգ, ողջ են մնացել 14-ը:Զավակներիցս 5-ը թագավորել են, ինչը հայոց պատմության մեջ միակն դեպքն է, երբ հինգ հարազատ եղբայրներ թագավորել են հաջորդաբար:

Լևոն Զ- Ես Լևոն Զ-ն եմ, գահ եմ բարձրացել հայ իշխանների խնդրանքով, ավա՜ղ, իմ օրոք՝ 1375 թվականին, Եգիպտոսի զորքերը գրավեցին մայրաքաղաք Սիսը, ինձ էլ գերի տարան Կահիրե:3600 սկյուռի մուշտակ փրկագին տվեցին եվրոպացի վեհապետերը և փրկագնեցին ինձ, 1393թ.մահացել եմ Փարիզում, և թաղվել ֆրանսիական թագավորների դամբարանում:

Մարգարիտա դե Սուասոն- Ես Լևոն Զ-ի կինն եմ , իմ մասին պատմո

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները

հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Օգտագործված գրականություն

1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:

2. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:

3. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:

4. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., 84 էջ:

5. «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում»-հոդված Փարեմուզյան Իննա

6.ՀՊՉ-*Արժեքային համակարգ* *https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=12604*

7.Վիքիպեդիա հանրագիտարան

8.Հայոց պատմություն-7-րդ դասարանի դասագիրք /Մանմար/

9.Ս. Խաչատրյան-Ուսուցման արդյունավետ հնարներ

10. Ա Պետրոսյան- Բոլոր ժամանակների Հայաստանը-հատոր Գ